




ՀԱՐՁԱԿՈՒՄ

ՀԱՅՊԵՏԱՐԱՏ

1942



89171-82
Z-41

ՀԱՐՁԱԿՈՒՄ

ՃԱԿԱՏԱՅԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԺՆԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ

1694
A $\frac{I}{3458}$

Կազմեց և փոխադրեց
ՍՈՂՈՄՈՆ ՅԱՐՈՆՅԻ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ * 1942

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅ

Այս գրույկում զետեղված նյութերը
ստացված են ուսն այն բանաստեղծ-
ներից, որոնք գտնվում են հայրենական
մեծ պատերազմի նակատներում:

ԳԱՐՈՒՆ

Գարունն է փալիս ծափ-ծնծղաներով,
Ամեն տաղվա պես խոսում ու հուզում.
Եվ ճակատի լայն ճանապարհներով
Ապրիլյան կապույտ ջրերն են հոսում:

Թեղ թեղա՝ կռիվն ուժգին առավել —
Վերջին ձյուններում, ստեպներում ծով:
Ծիծաղելի՝ է ոռւին վախեցնել
Ռուսական պայծառ, չքնաղ գարունով:

Իսկ մենք. շնչելով հարազատ բուրմունք,
Որսում ենք ոսկյա թելերն արևի:

Արևն — ուղի՝ է — դեպի Արևմուտք,
Եվ մենք, այդ ուղին, երբեք չենք դավի:

ԿԱՊՈՒՏԱԶՅԱ ԻՄ ՏՂԱ.

Կապուտաշյա՛ իմ տղա,
Այս ահա՛վոր օրերում
Երգիս տողերը կարդա
Եվ պահիր քո հուշերում:
Ուզում եմ ապրե՛լ, հաղթե՛լ՝
Պատերազմում այս դժնի.
Իսկ ֆաշիստի զարկն եթե
Իմ ճանապարհը կտրի՝
Գիտցիր, որ իմ փոխարեն
Կկանգնի մեծ մի աշխարհ,
Եվ իմ սիրտը հուրհրան
Քո կրծքի մեջ կապրի հար:
Պարտքս եմ կատարում արի
Օրերում այս դժնագին:
Տղա՛ս, դու չես կարմրի,
Հիշելով քո հայրիկին:

ԵՐԿՈՒՍՈՎ, ԷԻՆ

Երկուտով լին: Թշնամիքն նրանց 1
Օղակեց: Մեկը մտախառն վախեցած:
Չորս գնդակ շողաց և չորս կրակի
Պայթյունը խոցեց թիկունքն անարգի:
Երկրորդը մի քա՛յլ էլ չնահանջեց,
Ահեղ ոհմակի հանդիման կանգնեց
Ամբողջ հասակով, շեկ բլրի վրա,
Կարեց ջլապինդ թևերը իրա,
Ռոտմբով, ավինով ջարդեց խառորեն
Եվ օղակումից դուրս բերավ իրեն,
Շուրջը սփռելով դիերը նրանց:
Նա կյա՛նք էր աիրում, և նա ո՛ղջ մնաց:

ՍՊԱՍԻՐ ԻՆՁ

Սպասիր ինձ, և ես կգամ.
Միայն շա՛տ սպասիր.
Սպասիր, երբ սփռե անգամ
Թախիծն անձրևը իր:
Սպասիր, երբ բուք է դրսում,
Սպասիր ինձ շողին.
Երբ որ այլոց չեն սպասում՝
Սպասիր ինձ կրկին:
Սպասիր, երբ հեռումներից
Նամակ չեն դրկում քեզ.
Սպասիր, մինչ սպասումից՝
Ձանձրութի ցավ ապրես:

Սպասիր ինձ, և ես կգամ.
Մի՛ ցանկանա բարի—
Նրանց, որոնք կարծում են կա
Վայրկյան մոռացումի:
Թող հավատան մայր ու որդիս,

Թե կորած եմ անդարձ.
Թող ընկերներն՝ սպասումիս՝
Խարույկի շուրջ նստած,
Դառն գինի առնեն տրտում
Ի հուշ տեղեն քամել.
Սպասի՛ր, և նրանց հետ դու
Մի՛ շտապիր խմել:

Սպասիր ինձ, և ես կգամ—
Մահին ի տրտմություն.
Զապասողն էլ ախ անգամ՝
Բախտը ժպտաց մարդուն.
Օտար է տէր անպատողին
Թե անց, բոցի միջից,
Սպասումովքդ, թանկագին,
Ազատեցիր դու ինձ:
Ոնց կյանք առա, է՛լ առավել
Կզգանք ես՝ տու դու լուկ:
Կարողացա՞ր դու սպասել—
Ինչպես կյանքում— ո՛չ ոք:—

ՄԻ ԿՏՈՐ ՌԵԼՍԸ

Դեղին ժանգով պատած,

Ամենքից մոռացված՝

Նա ընկել էր անտեր, այնտեղ, ձյունում:

Թռչում էին թափով

Գնացքներն շտապով,

Դեկտեմբեր ամիսն էր, ու կռիվ էր գնում:

Գնում էին անվերջ

Վագոններն անընդմեջ.

Տանում գնդա՛կ և ուժժ, հազարավոր ական.

Իսկ այդ ուխտը մինչդեռ

Անպետք ու ժանգալներ

Ընկած էր մեկուսի, մենակ, անտիրական:

Աղմուկում գնդակի,

Հրանոթի, արկի,

Մարդիկ — գիշեր ցերեկ կռիվ էին մղում:

Անցնում էին օրեր—

Ու թռչում ամիսներ,

Իսկ ոեւսի կտորը դեռ ընկած էր հողում:

Բայց պատահմունք ահա—

Երկու գեղչուկ տղա

Կիսակայարանով անցնում էին հանկարծ.

Ծիծաղեցին նրանք,

Վրա պրծան արագ

Ու վերցրրին ոեւսի այդ կտորը ընկած:

Վերցրրին ու տալան

Ռազմական գործարան,

Ուր թշնամու անկման մետադն էր հոսում բարկ:

Ու լցրեցին խսկույն

Կաթսայում հրագույն

Եվ ոեւսի կտորը. դուրս եկավ որպես ա'րկ:

Ու գնացին ճակատ

Քնացքներն անընդհատ

Տանելով արկ, գնդակ, հազարավոր ական.

Բոլորի մեջ հիմա,
Հրետանո՛ւ համար—
Գնում էր և մի ա՛րկ — հզոր ու տիրական:

Հատավ նա ճակատին՝
Մոտիկ հրանոթին.
Արկղի մեջ դրված իր հերթին սպասեց.
Սպասեց նա մի քիչ,
Ապա սրաթուիչ
Սուրաց, գերմանական շտաբը պայթեցրեց...

Քիչ չեն աղբանոցում,
Բազում ու փողոցում
Զյունի մեջ թափթփված երկաթի կտորտանք.—
Ա՛յն, որ պետք է հալել,—
Արկ ու գնդակ ձուլել,
Որպեսզի թշնամուն մահացու հարվա՛ծ տանք:

ՄԻ ԽՈՍՔ

Զորս օր անվերջ հարցաքննում է նրան
 Ֆաշիստ սպան կրծքին խաչեր կպցըրած.
 Իսկ մի զինվոր՝ ուրրեց ձեռք ու իրան՝
 Մտրակեց ու նկուղ տարավ մոլթ ու թաց:
 Բայց չոր շուրթերը փակ են ու սեղմըված.
 Միայն մեկ մեկ, չարչարանքից ահավոր,
 Կախում է նա թույլ ձեռքերը դեպի ցած.
 Ցնցում է ուն ու հառաչում խուլ ու խոր:
 Ահեղ սպան ասաց, որ զուր է լռում,
 Համբերությանն էլ վերջ տանի... որ դա լոկ
 Սկի'զբն է դեռ տանջանքների անողոր:
 Բայց աղջիկը մազաչափ չի երերում:
 Դարձավ սպան չանգըռեց ձեռքը նրա,
 Քրքջաց ու, չարքի նման ծաղրելով,
 Քիչ կոացավ, ապա սիգարը իրա
 Զոհի ափին սեղմեց հտպիտ շարժումով:
 Գիտե՞ր՝ դանակը կտրում է, բոցն այրում,
 Ոգ բերել է նա գործիքներ սրասուր.

Բայց աղջկա փակ շուրթերը չեն բացվում,
 Առաջվա պես անշարժ է ու համր ու լուռ:
 Կիսամեռ է: Ահա նրա մոտ թափված
 Տանջանքների պաղ գործիքներ չարագույն.
 Սակայն ծաղրի այս չար դժոխքն էլ փտած՝
 Ո՛չ մի խոսք ու ո՛չ մի հառաչ չեն պոկում:
 Կիսամեռ է: Բայց պողպատի է նման:
 Ուր որ է՝ վախը կթռչի՝ ճիչի պես:
 Քարացել է, ինչպես գողը, չար սպան,
 Ինչպես ահեղ դատավորը դժներես:
 Էլ անուժ է — հեռացնել լույսը մոմի
 Իրեն զոհի զույգ աչքերից հրավառ:
 Նստեց սպան գոմաթափ ու զայրալի,
 Նստեց հոգնած, ու մոնչաց ուժասպառ: —
 — Պա՛րզ է, ասաց. — և հիմա դու կմեռնե՛ս,
 Եվ ի՛մ ձեռքով: Բայց կրկնո՛ւմ եմ դարձյալ.
 Նախքան դանակըս բարձրացնեմ վրադ ես,
 Պահանջո՛ւմ եմ, արտասանի՛ր գեթ մի բառ:
 Մութ նկուղում սփռելով լույս ու կրակ,
 Մեծ աչքերը՝ — տված հրին ու փայլին,
 Նրա տողոր, նրա բերա՛նը բարակ —
 Հոգու ամբողջ ուժով ասաց — Ստա՛լին: —

ԴԱՆԻԼ ՊԱՊԻ ՀԱՇԻՎԸ

Հակա կաղնու բնի վրա,
Հաստ ու ողորկ կեղևին
Երևում են շարված ահա
Կացնի քերթերը նրբին:

Այդ քերթերը ո՛չ ամեն մարդ
Նկատում է անցնելիս.
Եվ, անցնելով, մի ակնթաթի՝
Իրեն հաշիվ չի տալիս:

Բայց թե ուշի ուշով նայի
Եվ նշաններն այդ կարդա,
Նա անպատճառ կկոռահի՝
Դանիլ պապի գործն է դա:

Ծխամորճը քերնին դրած,
Իր սուր կաջնով, անտառում,
Հաշվել է նա իր ապանած
Ֆաշիստներին արձախում:

Այդ հաշիվը, ամառվանից,
Օրը օրին պահել խիստ,
Հետն էլ պատմում է խնդալից
Պատմություններ սրամիտ:

Լոկ շատախոս մարդիկն են որ
Կռվում չեն կոփում իրենց:
Դանիլ պապը, առաջին օր,
Երեք ֆաշիստ սպանեց:

Դա սկիզբն է, և սկզբում
Խատվ հաշիվ է արել:
Շատ շատերն են այս անտառում
Իրենց գլուխը դրել:

Ահա մի քերթ — նշում է այն՝
Ինչ կամուրջին պատահեց. —

Դիպուկ զարկով ընկավ անձայն
Մի մարդակեր՝ ջրահեղձ:

Ապա սիրով մի առանձին
Նշել է նա մի քերթ նոր.
Սպանվողը շտաբային
Գնդապետ էր հաստատիր:

Այլ քերթեր են գալիս ապա—
Մի նոր տառնյակ շարեշար.
Սրանց մի տեղ, Դանիլ պապը
Ուղարկել է այն աշխարհ...

Պապի գծերն ուղիղ են շատ.
Գծեր ձեն, ո՛չ անումներ.
Խա՛չ, իսկ խա՛չի ներքո—Փաշիստ
Օդաշու, որ խաչ ուներ:

Եվ, պարտիզան պապն, ամե՛ն օր
Կաղնուն հաշիվ է անում,
Ու քերթերի շարքերը նոր
Անվե՛րջ առաջ ձեն գնում:—

Ու թնին այդ հսկա կաղնու,
Անտառում այդ խուլ ու մուխ,
Ժողովո՛ւրդն է հաշվի նստում
Իր լեռնամու հետ անգութ:

Մինչ ընկերները, հուզմունքով,
Հարցընում են ամեն օր.
— Պա՛պ, ի՞նչպես է հաշիվը քո,
Քերթեր տմե՛ս նորանոր:

Ու գոհ սրտով, Դանիւ պապը
Ասում է. — Ի՛նչ ասեմ ձեզ.
Փա՛ռք աստըծու, գործըս լա՛վ է —
Աշխատանքի օրվա պես:

ՄԱՅՐՆ ՈՒ ՈՐԴԻՆ

Կանուխ առավոտյան այն տունը գույժ հասավ:—

— «Կորուստը դժվա՛ր է, ծա՛նր է, աստավ:—

Հանուն հայրենիքի, մի կռվում մեծ,

Ամուսինըդ իր թանգ կյանքը զոհեց»:—

Կինը՝ լռեց երկար:

Խոսք չէր գտնում,

Թե ծանրը գույժն ինչպե՞ս հաղորդի նա որդուն.

Դպրոցականի՛ն այդ՝ կլինի շատ դժվար:

Ո՛չ: Զե՛մ ասի: Երբեք:

Իսկ դրսում՝ հողմավար,

Զյունն էր թռչում թափով:

Այնտեղ, դրսում,

Ուրալյան դավոդնե՛րն են սպառնում:—

Գույժը հենց նույն օրը նաև դպրոց հասավ:—

— «Կորուստը դժվա՛ր է, ծա՛նր է, աստավ:—

Հանուն հայրենիքի, մի կռվում մեծ,

Վալոդի հայրիկը իրեն զոհեց»։—

Լսեց, լսեց փոքրիկ Վալոդը, ապա լռեց երկա՛ր.

Ընկերներին չառաջ և ո՛չ մի բառ։

Տուն գալիս՝ մտածեց.—

Մայրիկը չի՛ լսել։

Ու վճռեց այդ մասին ոչինչ չասել։

Զէ՞ որ երեկոյան պետք է զննա բանի.

Թե որ անի՝

Մայրիկը լա՛ց կլինի։—

Եվ այդ օրից մայրը և որդին միասին՝
խոսում են իբրև թե ապրող մարդու մասին.

Եվ հիշում են նրա խոսքերը զվարթուն,

Ո՛նց էր երգեր երգում, համբուրում էր որդուն,

Ո՛նց էր շուտ տուն գալիս ժպիտներով, սիրով,

Ո՛նց էր շուրջը լցնում ուրախ հանաքներով...։

... Եվ ահա գիշե՛ր է. մայրն արցյունք է թափում,
Լալիս է և որդին, սակայն թաքուն։

Իսկ վաղն անհրաժեշտ է ապրե՛լ, հաղթանակե՛լ.

Ես նրանց սրտերի տւժը ինչպե՛ս երգեմ։—

ՄԱՆԿԱՆՑ ԱՐՅՈՒՆԸ

Ի՞նչպիսի խոսք գտնեմ, իմ վիշտը հեծեծեմ,
Ի՞նչպիսի վրեժով իմ վրեժը լուծեմ.

Ա՛խ, ի՞նչպես մոռանամ ես այն ձեռքը նիհար,
Մոծայակյան անտառում, կուշ եկած ցրտահար:
Քնի՛ր, օ՛, խեղճ աղջիկ:

Քո կրծքին երկու վերք:

Ո՞րտեղ են քո հայրը և մայրը վշտաբեկ:

Շարժվում է տանին ահա — Ար՛ևմուտք զնալու.

Անգո՛ր է տանկիստը արցունքն իր զսպելու:

Ո՞վ ես դու, երեխա՛: Ո՞ւմ հույսը լուսավոր. —

Սպանված մանկապալան թշնամուց ահավոր:

Աղմբկում է քամին, թռչում է սրընթաց,

Զորս կողմը ահարկու անտառն է տարածված:

Հայրենի՛ք, դու նրան տղթում ես երգերում,

Ողբում է անտառը ալեհեր ձյուներում, —

Լուսե ա՛յն հայացքը և հնչուն ծիծաղն ա՛յն,

Եվ երգը, որ մեռավ, որ մարեց հավիտյան.

Կառուցում էինք մենք դպրոցներ, պարտեզներ,
Մեր մանկանց համար մենք մեծ շենքեր ենք
շինել:

Աշխարհին եմ ասում, պատասխան թող տան
ինձ. —

Այդ ո՞րտեղ, կամ ե՞րբ են մեր նման քնքշալից
Սիրել ու գուրգուրել մանկանցը, ինչպես մենք:
Քաղաքներ կերտեցինք երկրում մեր անեղերք, —
Ետ ընկած տեղերում, տայգայում, անտառում,
Եվ լույսը առաջին, և տունը կարկառուն,
Եվ ծաղկունքն առաջին, և մեր խիսդը անառնց,
Տրվում էր ամեն ինչ, ամեն ինչը նրանց:
Քնի՛ր, իմ հարազատ:

Ահա քո գլխի մոտ

Թմբիկներ է շինել ձյունահողմն աղմկոտ:
Արդյոք քեզ նաղե՞ղա՞, թե՞ կյուրով էր ասում, —
Մաշենկա՞ էր կոչում, — քո մայրը սիրատուն:
Քնի՛ր, օ՛, խեղճ աղջիկ:

Մեր տանկիստը ահա

Տանջալից քո մահը — երբեք չի՛ մոռանա:
Դողացե՛ք, օ դուք չար, չա՛ր մանկասպաններ,
Երբ կովում հանդիպեք տանկիստին դուք մեր:
Կկարդաք հայացքում վճիռը ձեր մահվան,

Եվ անհուն ցատումը: Եւք շունք փրկության:
 Սպանված մեր մանկանց, մեր վշտի անհատակ,
 Մեր ցավի համար դուք պատասխան՝ դեռ կտաք:
 Իմ տղաս, աղջիկըս... դուք հեռու քաղաքում,
 Իսկ ձեզ մոտ փչում է գարնան հովը փափկուն:
 Եվ թող իմ այս խոսքը հասնի ձեզ — թռչելով, —
 Հասնի ձեզ և ասի՝ ձեր հոգում շնչելով.
 Երկարք ձեր փոքրիկ ձեռքերը դեպի՝ ինձ,
 Եվ նրանք՝ թող անցնեն լեռներից, անտառից,
 Թող իմ այս թափածը, թող այս վիշտը անհուն՝
 Ձեր ձայնով լսելի դառնա ողջ աշխարհում: —
 Բոլորիս հայացքում ցատում կա կուտակված,
 Գնդակից ահարկու, ամպրոպից կատաղած:
 Ատում ենք մենք նրանց, որոնք մեզ վիշտ տվին,
 Մեր խաղաղ աշխարհին հուր բերին ու սվին:
 Ո՛չ, ես չեմ մոռանա — այն պաղ ձեռքը նիհար,
 Ջյունեղեն թմբիկը, անտառը հողմահար:
 Ամեն մի արցունքի, ամե՛ն մի մահացման՝
 Թշնամին դեռ պիտի, պիտի տա պատասխան:
 Ամեն մի քաղաքի ու նրա ս՛կ հողին
 Որոտա՛, հռանով, և հրով հեղեղի.
 Որպեսզի մոտենա օ՛րը մեր հաղթության, —
 Մեր մանկանց — ծիծաղի մեծ օրը խնդրության:

ՏԻՄ ՔԱՂԱՔՈՒՄ

Երեկ, Տիմ, քաղաք մտանք գրոհով—
Խաչաձև ձգված չորս ճանապարհով:

Տեսանք ավտոներ — ձյունի մեջ խրված,
Որոնց զարկել էր մահը խիստ հարված:—

Եվ թշնամական փայտացած դիեր—
Մեկ կոճղերի պես թափված կարիվեր:

Եվ այդ հանգուցում, քաղաքին մոտիկ,
Կանգնել էր հերոս, մի ջահել մարտիկ:

Որն ամենից շուտ քաղաքը մտել
Յոթը ֆաշիստ էր խոցել, թրատել:

Խորին հուզմունքով, նրան մոտեցած,
Սեղմում եմ ձեռքը և ասում արտանց:—

— Հերոսի՜ք անվա՛մք պիտի կոչել այս
Փոքրիկ քաղաքը — դեղեցիկ ու պարզ:

Թափահարում է նա ձեռքը արագ:—

— Իմ ինչի՞ն է պետք այսպիսի քաղաք:—

Կիևի հերո՛ս պիտի դառնամ ես.

Ա՛յ դա լուրջ գործ է, ճիշտ եմ ասում ձեզ:

Գործ է, երբ բոլո՛ր ճանապարհներով

Հաղթական մտնես քաղաքը կալով:

Ջարդես թշնամուն, ջնջես անխնայ,

Որ ո՛չ ոք Բեռլին չվերադառնա:

Ասաց ու մղվեց, աուրաց դեպի մարտ,

Ուր սպասում են քաղաք, գյուղ ու արտ:

Ուր սպասում են քույր ու եղբայրներ:

— Առա՛ջ:— Թա՛նգ է շատ ժամանակը մեր:

Ու ետև մնաց Տիմը ապահով—

Խաչածն ձգված չորս ճանապարհով:

ՆՈՐ ՏԱՐՎԱ ՔԱԼԼԱԴ

Երեւ մարդոյորենի մասին

Ռումինացին խիստ ցանկություն ունի
Այդ օրը իւր Նոր Տարին տոնել,
Սակայն ընթրիքը ո՞վ կտա հանկարծ,
Ու գնում է նա մտքի տունն ընկած:
Նա մի հավ տեսաւ գեղջկուհու բակում,
Ցցապատնեշից ներս թռաւ իսկույն
Բռնեց հապշտապ այդ հովիկը խելձ
Եվ ուզեց ճխտել պայտւսակի մեջ,
Երբ իտալացին ելաւ նրա դեմ,
— Է՛յ, շորվա՛ լակող, հանդգնո՞ւմ ես դեռ
Շանկել այն բանը՝ ինչ ես եմ ուզում:
Ու խլեց հավը, ու անոթ փառոթ
Տարաւ, ու մտքում ասում է, խոսում:

Իսկ անոն ու հացը ո՞վ կտա արդյոք:
Բայց ահա նրա դեմն է ցցվում շար
Մի գերմանացի կատաղի կապրալ:
— Է՛յ, գրո՞ւմ է նա,— մակարո՛նակեր,
Ո՞նց ես հանդգնում մարդկանց թալանել,
Ես ի՞նչ եմ հալա: Եվ խլում է նա,
Երջանիկ ժպտով՝ ուզում է գնա:

Այս բանը տեսավ պարտիզանը երբ,
Քաշեց փորձառու նախանն անվրեպ,
Կապրալին փռեց իր սոված փորին.—
Վերջ տալով իշանքում այս մարդկորին:
Մինչ գերմանացի զինվորն որոշեց,—
Իրենց կապրալին նա՛ էր սպանեց,—
Լիրբ իտալացին գրողի տառած.
Ու կրակ բացեց շուրջն համառարած:
Իտալացիներն երբ տեսան իրենց
Հայրենակիցը այսպես սպանվեց,
Գերման զինվորին, սվինով ցցոմ
Գետնով տվեցին: Իսկ ուժմխնացոմ,—
Այդ շաշ շշմածին բռնեցին նրանք,
Եվ դատաւտանը կարճ եղավ, արագ:

Այսպէ՛ս Նոր Տարուն դիմաւորեցին,
Յուրտ գերեզմանում սակայն տոնեցին:
Իսկ հաւը ապրեց: Գեղջկուհին խնդուն
Առաւ իր ապրանքն ու տարաւ իր տուն:
Անիծւածներից խեղճ հաւը պրծաւ:
Եվ այս բալլադը ուրախ վերջացաւ:

ԻՈՍԻՃ ՈՒՏԿԻՆ

ԱՅՆ ՄԱՍԻՆ

ԹԵ ԻՆԶՊԵՍ ՊԱՌԱՎԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ
ՅԱՆԸ ՊԱՀՊԱՆԵՅ

Մի պատաւ կնիկ
Մտտիկ անտառի
Խորքերը մտաւ,
Որ քիչ ցախ բերի:

Գնաց. շվարեց,
Մեխսեց իր տեղում.
Ի՞նչ է պատահել,
Բան չի հասկանում:—

Թումբը տեղումն է,
Բայց ցախը չկա.
Տե՞ղն է մոռացել,
Զէ՛, աստված վկա:

Չորս կողմը ծանոթ,
Ծանոթ ծառ ու ծեղ՝
Երևում է, որ
Մի բան կա էստեղ:

Մտածում էր հենց
Ու տեսնում է նոր
Կիտված ցախի մոտ
Շարժվում է ինչ-որ:

Բանդի՞տ է, թե՞ շարք
Թաքնըվել անձա՞յն,

Մի կողմ — ցախափայտ,
Մի կողմ — հրաքան:

Պառաժը լռին
Ասում է մտքում. —
Էս ո՞վ է գալիս
Յախը հավաքում:

Բայց չէ՛, մեր երկրում
Ո՞վ պիտի լինի,
Որ գա, էն էլ ցախ
Գողանա, տանի:

Ու մտածում է, —
Չէ՞ որ էնտեղ միշտ
Կանգնած հսկում են
Պահակները խիստ:

Ու շուռ է գալիս
Գնում ուղեկալ:
— Ընկե՛ր պետ, էնտեղ
Ճապոնացի կա:

— Ճապոնացի՞, ո՞ւր:
— Անտառի խորքում:
Պետը զենքն առած
Վազում է խելույն:

Վազում է արագ,
Պառաւն ետևից,
Բանդիտն ելնում է
Ցախերի տակից:

Ելնում է, ամբողջ
Հափաղով կանգնում,
Իրեն աչքի փուշ
Պառավին նայում:

Վրա է տալիս
Մեր պառավը էս,
— Մի ասա տեսնեմ՝
Ի՞նչ չափավար ես:

Ի՞նչ իրավունքով,
Սովետի երկրում,

Եկել մերու ցախն
Առնում ես, տանում:

Էդ ի՞նչ է, ձեզ մոտ,
Ճապոնացի գել,
Ձմեռվա համար
Յախ չի՞ մնացել:

Ուզում է խփել
էս գող բանդիտը:
— Մայրի՛կ, մի՛ վախի,
Ասում է պետը:

Չենք թողնի սրանց,
Ովքեր էլ լինեն,
Որ մեր կանանցը
Հեշտ վիրավորեն:

Էնպես որ՝ դնա՛
Տունըդ քեզ համար:
... Էստեղ պատմածըս
Պիտի վերջանար:

Բայց խելոք պետք
Տվեց հեռագիր,
Որ էս պառավին
Մոսկով ուղարկի:

Պառավն, — ասել է, —
Գոհա՛ր է, գոհա՛ր.
Խնդրում եմ կանչել
Զեկուցման համար:

Պառավն էլ չսեց,
Կանչեց սանահոր.
— Ա՛յ իմ սանահե՛ր,
Տուր ինձ թաղա շոր:

Ինձ ասում են թե
Գոհա՛ր ես, գոհա՛ր.
Մոսկով եմ գնում
Զեկուցման համար:

Հին դերայով ո՛նց
Լինեմ Մոսկովում:

... Եւ ընդոմեցին
Նըրան Կրեմլում:

Կերաւ ու խմեց
Եւ ուրախացաւ.
Եւ Կալինինից
Մեղաւ ասացաւ:

Կալինինն ասաց. —
— Կաւ գործ ես արել.
Միշտ էդպէս պետք է
Ցախը պահպանել:

Որպէսզի ո՛չ մի
Խող՝ իր կեղտանոց
Քիթը չկոխի
Մեր բանջարանոց:

Չե՛նք թողնի նրանց,
Ուլքեր էլ լինեն,
Որ մեր կանանցը
Հեշտ վիրամորեն:

Իսկ պառաւի՛ն անայց.—
— Պարտք ենք կատարում,
Ասենք, ես, ցախի
Հաճա՛խ եմ գնում...

ԱԼԵԿՍԱՆԴՐ ԲԵԶԻՄԵՆՍԿԻ

ԵՐԿՈՒՍՆ ՈՒ ՄԱՀԸ

Լռեց հրալին մըրիկն ահապարս,
Նստեց թափանցիկ, փափուկ լռություն,
Վաղ ծեղին՝

անցավ մահը ալեւարս,
Կանգնեց անտառի խաղաղ բացատում,
Ճանճն ու թռչունը երգում են ուրախ,
Սարդն սկսում է ոստայնը հիմել...
Եւ խենթ պառաւի՛ր տեղում է իրա
Ծանրացած սիրտը

քիչ թիթևացնել:

Շուրջը թափված են տանկեր ջախջախված,
Դիակներ, դենքեր, փայլուն կորդակներ.
Շատ լավ կլինեն այս տեղանքում բաց
Թեկուզ մի մարդու մի...

բարիք աներ:

Լսում է մահը

հեռու բլրակին

Երկու զինվոր են տնքում թփի տակ,
Որ ան խաչ

ոմեն իրենց թևերքին,

Սև խաչի վրա — երկաթյա մի գանգ:
Վախեցած ծաղրից կերկերուն, խռպոտ,
Երգող թռչուններն

հեռու սլացան.

Ու գնաց մահը զինվորների մոտ,
Սկսեց իրա խոսքը լուծալի:
— Դո՛ւ, ի՞նչ ես ուզում,—

հարցրեց այսպես.

Կռացած նրա սեաշոր ոստին.

Եվ զինվորն ատաց անուժ մարդու պես.

— Օգնի՛ր ինձ, պառա՛վ... Ապրե՛լ եմ ուզում:
Ահա նա — իմ հին ընկերը մանկութ,

Այժմ ընկած է իմ մեջքին,

նայի՛ր.

Աղատի՛ր ինձ այս բեռից ավելորդ.

Շտապի՛ր...

Դե՛, շո՛ւտ...

Նրան սպանի՛ր:

Ապրել եմ ուզում... Տե՛ս, անթիվ գյուղեր

Իշխանութիւն տակ մեր բարեխնամ:

Ուզում եմ ես այս կովից հետո դեռ

Մեծ խանութները հապճեպով գնամ:

Ապրել եմ ուզում,

որ կատարածեմ

Այն հրամանը մեզ տրված

ստույգ,—

Մեր մարտիոցը դեռ պիտի սրածե,

Գնդակահարե չորս հարյուր

գեղջուկ:

Ուզում եմ տեսնել տանջանքը նրանց

Կանանց արցունքը, մաճկանց լացն

աղի,

Որ իմ տիրոջը հաճույք տամ անա՛նց,

Նա՛, որ ստրուկ է ծեծում կատաղի:

Ապրել եմ ուզում,

որ աշխարհն ստրուկ
Չլաճգվի շար սաստանայի պես.

Սրբացնելու այն պատկերը հստակ,
Որ գորշ գանգ տնի, բառերով՝ «էս-էս»:
Ուզում եմ իշխել

բոլոր—

բոլորի՜ն.

Ճգմելու աշխարհն ու մարդկանց հլու:

Ապրել եմ ուզում,

որ ուզած ժամին

Անվերջ սպանեմ-առանց հոգնելու:

Լոռ՝ ես: Օ՛, վի՛շտ: Համրանում եմ, տե՛ս.

Խնայի՛ր: Խղճա՛: Մի՛ սպանիր ինձ:

Մինչ թարմ անտառի ճյուղքերը այնպես

Արձագանքեցին երգով քնքշալից:

Ոչ մի խոսք չառանց պառակտվր անա՛հ,

Մատնելով նրան

մահվան սարսափին՝

Ցասկոտ վեր ելավ, ու նկատեց նա—

Երկու մարտիկի — լճակի ափին,

Որոնք տնեին

ոսկեվառ նշան,—

Մուրճը և Մանգաղ և Աստղ հնգաթև:
Կանգնեց ոսկրոտ պառաւիլը աշնժամ,
Եկաւ շեշտակի—

ուղիղ նրանց դեմ:

— Դո՛ւ ի՞նչ ես ուզում.

նա խուլ շշնջաց.

Մի թաքցրնի քո չարն ու բարին է՛լ.

— Դու ի՞նչ ես ուզում.

այսպէս նա ասաց

նրան, որ տեղից կարող էր ելնել:

Եւ մարտիկն ասաց ուժ առածի պես.

— Իմ ընկերոջն եմ... ազատել ուզում,

Երջանկությո՞ւնն եմ ուզում ապրել ես.

Թշնամու հանդեպ խիստ լինել քո պես.

Օգնի՛ր, որ լինեմ

մեր զորամասում.

Նրան հանձրնեմ... Նո՛ր սպանիր ինձ:

Զարմացաւ մահը. ինքնին մտմտաց.—

Նկատելի է, մա չի նրանցից.

— Ապրե՛լ ես ուզում... Ու մարտիկն ասաց.—

— Ապրե՛լ եմ ուզում

ամենքից էլ շատ:—

Սիրում եմ

արև, երկինքն եմ սիրում,

Սիրում եմ

ծաղիկ, հողը հարազատ.

Սիրում եմ

հացը, որ խինդ է բերում.

Համեղ պտուղներ.

գեղեցկութուն, զարդ:

Օգնել եմ ուզում հայրենիքին մեր,

Ջախջախե՛լ, փշրե՛լ թշնամուն անարդ.

Ուզում եմ

կյանքում շա՛տ գործեր անել,

Քանզի ինչ համար կյանքը շա՛տ է թանգ:

Ուզում եմ

ապրել մի տենչով միայն,

Ա՛յն երկրի հետ, որ սիրտ ունի

ջահել.

Նա՛ լուկ երչանիկ կհաշվի իրան

Ով բախտ է բերում

ուրիշների՛ն էլ:

Ուզում եմ

ապրել խիզախ թռիչքի,
Ազատության, ողջ աշխարհի համար,
Ապրելով՝

զրկե՛լ քեզ աշխատանքից,
Որ սպանե՛մ քեզ — ոսկրոտ նիհար:

... Այնժամ պառաւիւր ո՛չ մի խոսք չսաց:
Նրբին զեփյուռը երգն իր սփռեց ժիր
Մարտիկի վրա,

որ սողում առաջ,
Մեջքին՝ տանում էր ընկերոջը իր:
Ամաչեց մահը ամենահզոր,
Ու մի թուլություն սկսեց զգալ.
Մինչ մարտիկն առաջ սողաց նորից նոր,
Դառնալով մահին տեր ու տիրակալ...

Արկերով ճզմած թփուտներին խեղճ
Զարկեց արձը շողքը պղնձի...

.....
Գնաց մահն

այնժամ գերման զորքի մեջ,
Որ իր գերանդով կատաղած հնձի:

ՀՐԵՏԱՆԱՎՈՐԻ ՈՐԴԻՆ

(Պ Ո Յ Մ)

Մայոր Դեեմն ուներ մի քաջ
 Ընկեր, Պետրով անունով,
 Որ դեռ քսան թվից առաջ
 Նժույգներին սուրալով,
 Ճերմակների դեմ միասին,
 Կռվում էին ու հաղթում,
 Վերջը մեկտեղ ծառայեցին
 Հըրետանային պնդում:

Պետրովն ուներ մի լավ տղա,—
 Լենկա կոչված այդ խոխի
 Բախտն աշխատե էր,— անուշք թողած,
 Մեծանում էր իր գլխի:
 Հայրը երբ որ տեղ էր գնում
 Ուշք ու միտքը իր գործին՝

Դեհմըն Բակույն տեր էր կանգնում
Փոքրիկ թուկից փախածին:

Նա Լենկային առում էր միշտ. —

— Վե՛ր կաց, զնանք ման գալու.
Ժամանակն է — վարժ ու հանգիստ
Ռազմական ձի նստելու.

Եվ Լենկայի հետ գնում էր
Թոցընելու նժույգին.

Բայց այդ խոխին, իր ձին մեկ մեկ
Չէր հասցընում թմբկին:

Գլորվում էր, տեղում մնում:

— Հա՛պա փորձիր հիմա նոր:

Ու, Դեհմըն, վեր էր հանում

Նրան, որպես երկրորդ հոր.

Նստեցնում էր թամբի վրա.

Եվ ասում էր սառնարյուն. —

— Գիտցիր, որ այս կյանքում, տղա՛ս,
Երկու անգամ չենք մեռնում: —

Ո՛չ ոք, ոչ ոք մեզ չի կարող

Թամբից ուժով գցել վար:

Եվ այսպիսի ջերմ խոսքերով
Նա խրատում էր երկար:
Այսպես, անցավ Կրեք տարի,
Կյանքն անջատեց երկուսին—
Գրեց տարբեր կողմն աշխարհի
Դեկվին ու Պետրովին:

Դեկվն անցավ դեպի հյուսիս,—
Տայգաները, ցուրտ հեռուն.
Հասցեն չկա, ընկերներին
Նամակ գրել չէր սիրում.
Բայց և մեկ մեկ, իր մտքի մեջ,
Մի ջերմ սիրով մարդկային,
Մի կարոտով խոր ու անշեջ՝
Հիշում էր իր Լենկային:

Անցավ դարձյալ տասը տարի
Եվ լռությունը պայթեց.
Եվ որոտաց պատերազմի
Լուրը ամբողջ երկրով մեծ:
Ու Դեկվը լրագրերի
Սյունակները պրպրտում

Որոհում էր կարոտալի
Պետրովին ու իր տրդուն:

Եվ մի անգամ հանդիպեց նա
Անվանը իդ ընկերոջ.

Գովում էին թերթում նրան.

Ուրեմն ողջ է, առողջ:

Հետո եկավ մի անծանոթ

Ընկեր, եղած մարտերում.

Եվ Դեեվին ասաց վշտոտ. —

— Պետրովն ընկա՞վ Ղրիմում:

Դեեվն առավ մի թերթ այդ օր

Սահեցնելով աչքի տակ.

Ու տխրեթյամբ ամսոսաց որ

Զկա՛ որ՛չ լուր, որ՛չ նամակ:

Բայց շատ շուտով, այդ գիշեր հենց,

Պատահաբար, օ՛, ի՛նչ բախտ.

Դեեվի մոտ նշանակվեց

Լեհական — որպէս լեյտենանտ:

Նստել էր նա քարտեզի դեմ,

Ծխոտ մոմի լույսի տակ.

Երբ ներս մտաւ ճերմակադեմ
Մի ջահել մարդ կռուհասակ:
Առաջին իսկ վայրկյանից նա
Զճանաչեց, ու միայն
Լեյտենանտի քաղցր ձայնը
Նրան թվաց ծանոթ ձայն:

— Ապա, մո'տ եկ լույսի առաջ:
Ու բարձրացրեց մոմը վեր:
Նույն ռուսական քթիկը կարճ,
Նույն մանկական նուրբ շուրթեր,
Եվ բեխերը ծլած նոր-նոր:
— Լե'նկա, տղաս, այդ դո՞ւ ես:
— Ես եմ, Լենկան, ընկեր մայրոր,
Քո Լենկան եմ, ճիշտ այդպես:

— Վերջացրե՛լ ես դպրոցն արդեն:
Լա՛ւ: Կլինենք մի փնդում.
Է՛, եղբայրս, տխուր բախտ է, —
Ափսո՜ս, հայրըդ չի ապրում:
Եվ Լենկայի աչքերի մեջ
Փայլեցին ջերմ արցունքներ.

Բայց և մի կերպ իրեն զսպեց
Ու կանգնեց լո՛ւռ, աներեր:

Մինչ Դեեվը ասաց նրան.

Ինչպես մանկութ օրերում.—

— Գիտցի՛ր, որ այս կյանքում, տղա՛ս,

երկու անգամ շենք մեռնում:

Ո՛չ ոք, տ՛չ ոք մեզ չի կարող

Թամբից ուժով գցել վար:

Եվ այսպիսի ջերմ խոսքերով

Նա խրատում էր երկար:

Այդ օրվանից երկու շաբաթ

Անցել էր, ևրբ մի թեժ օր

Կռիվ եղավ, ու մի արտոտ,

Մի խիզախ էր հարկավոր:

Կանչեց մայորը Լենկային,

Չափեց հայացքը նրա:

— Լսելով ձեր հրամանը՝

Ներկայանում եմ, ահա՛:

— Կա՛վ արիր, որ ներկայացար.

Փաստաթղթերը թող ինձ.

Մի ռադիստի էլ հետըդ առ,
Պաշար վեր առ պահեստից.
Եվ ճակատի գծով անցիր
Թիկունքը մեր ոսոխի.
Քո անցնելը, լա՛վ իմացիր,
Կռվի ելքը կփոխի...

Քո ռադիոյով դու պիտի որ
Մեր մարտը կոցը վարես:
Պա՛րզ է:— Պա՛րզ է, ընկեր մայոր:
— Դե, գնա շուտ:— Ճի՛շտ այդպես:
— Ո՛չ, սպասիր մի քիչ էլ հենց...
Ու մայորը արտագին՝
Լեյտենանտին բռնեց, գրկեց,
Ամուր սեղմեց իր կրծքին:

— Դու գնում ես դժվար գործի,
Որ հույս չկա դառնալու.
Ես, որպես պետ, ի՛մ սիրելի,
Խնդումթյամբ չեմ ղրկելու:
Բայց ասա՛ ինձ դու այս անգամ,
Հա՛յր եմ եղել քեզ համար:

— Հա՛յր ես եղել, ասաց իենկան,—
Ու կմնաս միշտ ինձ հա՛յր:

— Այսպե՛ս: Որպես հայր ու որդի՝
Մենք սիրել ենք միշտ իրար.
Ես, հայրական իրավունքի
Պարտք եմ դնում քեզ վրա:—
Նախքան այլին տղարկելու՝
Առաջ որդուս եմ դրկում.
Գիտցի՛ր, որ այս կյանքում, տղա՛ս,
Երկու անգամ չենք մեռնում:—

Ո՛չ ոք, ո՛չ ոք մեզ չի կարող
Թամբից տւծով գցել վար:
Եվ այսպիսի ջերմ խոսքերով
Նա խրատում էր երկար:
— Հասկացա՞ր ինձ:— Եվ այն էլ՝ վա՛յ:
— Թույլ տուր գնալ:— Դե, գնա՛:
Ու գետնափոր տնակ մտալ
Մարտիկ մայրորդ անահ:

Լսվում էր խուլ թնդյուն, որոտ,
Նա, ժամացույցն իր սուռաջ,

Հետևում է: Հեշտ շէ՛ր, արդյոք,
Ինքը լիներ հանձն առած.
Տասներկուան է: Լենկան հիմա
Սահեց՝ պուտերի կողքով:
Մեկն է արդեն: Երևի նա
Անցավ ծանոթ բարձունքով:

Ժամն երկուան է: Նա պիտի խոր,
Մթին ձորակը մտնի.
Երեք: Պիտի շտապի, որ
Կույսը նրան չմատնի:
Մայորն ելավ գետնափորից.
Լոտինն այնպե՛ս էր պայծառ.
Գոնե դուրս զար երկու օրից
Այդ տիրուներ անիծյալ:

Ճոճանակի պես, ողջ գիշեր,
Քայլեց անքուն տւ մենակ:
Արեգակը երբ ելավ վեր՝
Ռադիոն տվեց մի զիլ զարկ:
— Ամեն ինչը կարգին է, պե՛տ,—
Չախ թևումն է թշնամին:

Երեք—տասը — կոօրդինատ,—
Կրա՛կ տվեք սաստկագին:

Հրանոթները թնդացին

Մայրի վարժ հաշվարկով.

Եվ թեժ արկերը առաջին

Սուրացին սուր սլացքով:

Եվ նորից նոր ազդանշան,—

— Աջ թևումն է թշնամին:

Հինգը— տասը — կոօրդինատ,—

Կրա՛կ տվեք սաստկագին:

Վեր են թռչում հող ու քարեր,

Ծովս, հուր ու բոց անխնա.

Ու թվում է, որ այնտեղ էլ

Կենդանի շունչ չի մնա:

Հնչեց մի նոր ազդանշան.—

— Թշնամին շուրջս է հիմա.

Չորսը—տասը—զարկել նրան,

Կրա՛կ թափեք ահ ու մահ:

Գուցնը թռավ մայրի երբ

Ազդանշանը լսեց:

— Կորա՛վ Լենկան, այն էլ ի՛նչ կերպ...
Անիծյալըս կործանեց...
Բայց դեն քեց այդ ահա՛վոր
Միտքը հեռո՞ւն ու հեռո՞ւն:
Կրակ բացեց նա նորից նոր,
Զարմանալի սառնարյուն:

— Կրա՛կ: Թոե՛ք, ահեղարկեր,
Լցվե՛ք, փողեր հրաբուց:
Ու արկերով այդ մահաբեր
Զարկում էին հինգ մարտկոց:
Ռադիոն լուռ է: Բայց և հանկարծ
Տալիս է մի ւերկա՛ր զարկ.
— Լռել էի՝ պայթյուններից.
Կրա՛կ, անդադար կրա՛կ:—

Հավատում եմ, արկերը մեր
Չեն վնասի ինձ երբեք.
Ֆաշիստները ճողոպրում են,
Կրակի ծո՛վ տեղացեք:
Ու մայուրը արդեն վերջին
Ազդանշանն ընդունեց՝

Ամուր սեղմած ընդունիչից
Ամբողջ ուժով մեկ՝ կանչեց:

— Դու լսո՞ւմ ես... Մահը քեզ պես
Քաջին երբեք չի բռնում.

Դիտցի՛ր, որ այն կյանքում, տղա՛ս,
Երկու անգամ չենք մեռնում:

Ո՛չ ոք, ո՛չ ոք մեզ չի կարող
Թամբից ուժով գցել վար:

Եվ այսպիսի ջերմ խոսքերով՝
Խրատում էր սրպես հայր:

Իսկ երբ զորքը գրոհ գնաց՝

Մինչև կեսօրը ավարտ

Մաքրեց գերման գազանացած

Խուժրութեններից բարձունքն այդ:

Դիեր էին ամենուրեք,

Վիրավորներ մահապահին:

Ու ձորի մեջ, գլխին խոր վերք՝

Գտան խիզախ մարտիկին:

Նա ընկած էր: Վիրակապը

Հապճեպ կապել էր գլխին.

Նայեց մայրն ու մի ըռպե
Զճանաչեց Լենկային:
Առաջվանն էր Լենկան նորից,—
Հանգիստ, խրոխտ ու ջահել.
Միայն նրա աչքերն էին
Պղտորվել ու գունատվել:

Նայեց, նայեց նա մայրին,
Ապա ասաց սառնարյուն. —
— Գիտցի՛ր, որ այս կյանքում, հայր իմ,
Երկու անգամ չենք մեռնում:—
Ո՛չ ոք, տ՛չ ոք մեզ չի կարող
Թամբից ուժով գցել ցած:
Եվ այսպիսի ջերմ խոսքերով՝
Հիվանդանոց նա գնաց:

Այսպես ահա սիրտ է հուզում
Պատմությունը այս գործի,
Որ, Սրեզնի թերակղզում,
Ընկերներն ինձ պատմեցին:
Եվ ի պատիվ մեր վեհապանծ
Հերոսի՝ մենք վեր առանք

Բաժակները նրա կենաց,
Ու խմեցինք մինչև տակ:—

Նրա՛ համար, որ դեպքը այս
Վերջ ունեցաւ քախտաւոր,
Որ հերոսն այս, ազնիւ ու պարզ,
Պարծառք եղաւ իրեն հոր,
Եւ ի կենաց մարտիկների
Հայրենասեր, քաջականջ.
Եւ ի կենաց քաջ հայրերի,
Որդիների նրանց քաջ:

Մինչ երկնքում, լեռներից վեր,
Դեռ լուսինն է փայլում նոր.
Դեռ լսվում են խոլ թնդյուններ
Պատերազմի ահաւոր:
Դեռ հեռախոսը հնչո՛ւմ է,
Հրամանատարը, անքուն,
Նոր կենկա՛ է չար թշնամու
Թիկունքն այսօր ուղարկում:

Յ Ա Ն Կ

Հրատարակչութեան կողմից	2
Գարուն	3
Կնարկուտա՛նյա իմ տղա	4
Երկուսով էին	5
Սպասի՛ր ինձ	6
Մի կտոր ունիւր	8
Մի խոսք	11
Դանիւ պապի հաշիվը	13
Մայրն ու որդին	17
Մանկանց արյունը	19
Տիմ քաղաքում	22
Նոր Տարվա բալլադ	24
Այն մասին	28
Երկուսն ու մահը	33
Հրետանավորի որդին	40

Պատ. խմբագիր՝
Գ. Բ. Ս ա ր յ ա ն

ՎՖ. 2773 Պատվեր 372. Տիրաժ 3000.
Տպագրական 31/2 մամ. Ստորագրված
է տպագրության 30/V—42 թ.

Հայպետհրատի տպարան, Երևան, Լենինի 65




ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0037824

249

7565 2 0



А Т А К А

Фронтные поэты
(Сборник)

составил и перевел
С. ТАРОНЦЫ

Армгиз—1942—Ереван